

ՀԱՅ - ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԸ

Մերէկ լրացան յառաջիկայ կիրակի օրուան պաշտօնական հանդէսներուն վերաբերեալ կարգադրութիւնները: Կարգադիր Մասնախումբը, որ ի սկզբան 53 հոգիով կազմուած էր, այսօր հազիւ 20 հոգիով կ'գործէ, աւելի օգտակար կերպով: Ասոնցմէ մէկ մասը կ'զբաղի հանդէսին կարգադրութիւններով, ուրիշ մաս մը յանուն կրթութեան հիմնական դրամագլուխը կազմելու համար ծախուելիք առարկաներու բաշխմամբ: Այդ առարկաներն այսօր իսկ Մասնախումբին մէկ քանի անդամներուն կողմէ պիտի յանձնուին թաղերէ դիմողներու:

Մերէկ Պատրիարքարանի Գործակատար Գամէր էֆ. թէ՛ ստիկանական անօրէնութեան և թէ՛ Բաղաքապետ փաշային հաղորդեց կատարուելիք հանդէսներուն վերաբերեալ անդեկութիւնները, և թէ՛ Ազգի պէյ և թէ՛ Ճէմիլ փաշա հրահանգաւորն ստիկանական և քաղաքապետական պաշտօնեաներուն որ նուիրահաւաքութեան համար հրապարակ հանուած տոմսակներուն և ծախուած առարկաներու համար դժուարութիւն չյարուցուի:

Կրթական նախարարութեան կողմէ վաղուան հանդէսին ընդհանուր ներկայացուցիչ կարգուած է վարժարանաց ընդհ. քննիչ Սիւրէյա պէյ. ուրիշ նախարարութիւններէ ալ ներկայացուցիչներ պիտի ղրկուին:

Տեղապահ Ս. այսօրուան համար նիստի հրաւիրեց 10 հոգիէ բաղկացեալ այն յանձնաժողովը, որ Ազգ. ժողովին անցեալ ուրբաթ օրուան նիստին կազմուեցաւ, պաշտօն ունենալով ձեռնարկել նպաստահաւաքութեան, կրթական հիմնական դրամագլուխին համար: Թաղերու մէջ հանդէսներու առթիւ կազմուած կարգադիր մասնախումբերն իրենց պաշտօնը երբ լրացնեն, անկէ վերջն է որ այս նպատակին համար պիտի ստացուին կարեւոր նուէրները:

Հայկ. Բ. Միութեան Գահիրէի կեդրոնէն հեռագրով կ'սնդրեն որ վաղը Մայր Եկեղեցւոյ մէջ կատարելի հանդէսներուն ի դիմաց Միութեան ներկայ գտնուի Պոլսոյ մասնաճիւղին դերատենապետ Մկրտիչ էֆ. Էսաեան:

Սանասարեան Խնամակալութեան ներկայացուցիչն է Վահան էֆ. Էսաեան, իսկ Բզմիրեանց գրական յանձնաժողովին անդամները խմբովին ներկայ պիտի գտնուին գրականութեան նուիրուած այս մեծ տօնին: